

Գ. Ա. Մազոյան

ԳԵՎՈՐԳ ԱԽՎԵՐԴՅԱՆԸ ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

XIX դարակեսի մշակութային գործիչ Գևորգ Ախվերդյանը (1818—1861) Սայաթ-Նովայի ստեղծագործության հայտնաբերմամբ և գիտական հրատարակությամբ անգնահատելի ծառայություն մատուցեց մայրենի գրականությանը, իսկ Թիֆլիսի հայկական բարբառի ուսումնասիրությամբ մեծ շահով նպաստեց աշխարհաբար լեզվի և հայ բարբառագիտության զարգացմանը:

Փայլուն կերպով ավարտած լինելով Մոսկվայի Լազարյան ճեմարանը և ապա՝ կայսերական համալսարանի բժշկական ֆակուլտետը, Ախվերդյանը 1839—1846 թթ. որպես դինվորական բժիշկ ծառայում է նախ Թիֆլիսում և Կովկասյան այլ կայազորներում, ապա Պետերբուրգում՝ ցամաքային ուժերի երկրորդ հոսպիտալում: 1846 թ. աշնանը նա ազատվում է դինվորական ծառայությունից, վերադառնում հայրենի Թիֆլիս քաղաքը, պաշտոն ստանում Կովկասյան փոխարքայի գրասենյակում և ծառայությանը զուգընթաց զբաղվում նաև բանասիրական լուրջ հետազոտություններով:

Հայ նոր գրականության զարգացման նախօրյակին կարևոր նշանակություն էին ձեռք բերում ժողովրդական բանահյուսության և հայոց լեզվի իւր ուսումնասիրության հարցերը: Եվ Ախվերդյանն ամբողջովին նվիրվում է դեռևս խոպան այդ բնագավառների հետազոտմանը:

Հայ նոր գրականության զարգացման ճանապարհին Ախվերդյանը նույն դառնություններն է ճաշակում, ինչ իր մեծ ժամանակակից հաշատուր Աբովյանը: Երկու հայրենասեր գործիչներ միևնույն նվիրական զգացմունքներով էին տոգորված՝ լինել մայր ժողովրդի հետ, կյանքի ու առաջադիմության կոչել նրան: Ախվերդյանի և Աբովյանի հոգեհարազատությունն ակնառու կերպով դրսևորվում է նրանց անդրանիկ գործերում: Աբովյանն իր հռչակավոր «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում սրտի կսկիծով արձանագրում էր. «Եվրոպիումն էլ որ չէի կարդում բազի գրքերում, թե հայ ազգը պետք է, որ սիրտ չի ունեցած ըլի, որ էնքան բաները գլխովն անց են կացել, մեկ մարդ էլ ա չի դուրս եկել, որ մեկ սրտի բան գրի...»¹:

Նույն այրող մտքերը Ախվերդյանին ստիպում էին իր «Գուսանքի» նույնքան քնարական առաջաբանում գրելու. «Վաղուց լսում եմ օտարներուցն ու ազգակիցներուս. նախատինքն՝ թե հայերն զուրկ են պովետական զգացմունքից, էնդուր որ շունինք մեկ երեւելի քերթված կամ ազգային աշխույժ երգեր, որն որ վկայում լինի մեր բանաստեղծական ոգուն»¹:

Օտարների ու հարազատների այդ կշտամբանքի ծանրության տակ, իրենց իսկ ներքին մղումով երկու հայրենասեր գործիչներ նույն ազնիվ նպատակով, բայց տարբեր դիրքերից ասպարեզ նետվեցին հակառակն ապացուցելու հա-

¹ «Գուսանք», Ա, Սայաթ-Նովա, լույս գցած աշխատասիրությունով Գեորգեա Ախվերդեան, 1852, Մոսկվա, էջ Բ:

մար: Արովյան ստեղծագործողն այն հերքելու նպատակով գրիչ վերցրեց գրելու իր դարակազմիկ «Վերք Հայաստանին», իսկ ամխոնջ բանասեր Ախվերդյանը գնաց դեպի ժողովուրդը, հայտնաբերելու նրա բանաստեղծական հոգու երկնած «երևելի քերթվածները»:

Ախվերդյանը շրջում է ամենուրեք, մասնավորապես Թիֆլիսի արհեստավորական շրջաններում, պանդուխտների իջևաններում, ունկնդրում ժողովրդի մարդկանց ձայնը, գրի առնում «հայերեն առակ, առած, վիճակախաղ և ամեն տեսակ խաղեր»: Այս ընթացքում նա հայտնաբերում է գեղեցիկ, սրտաբուխ, հուզիչ ժողովրդական բանաստեղծություններ՝ հայ ժողովրդի «պովեստական զգացմունքի» անուրանալի ապացույցները:

Ախվերդյանի հավաքած ժողովրդական խաղիկների՝ ջանգյուլումների մեջ հանդիպում ենք հայկական բոլոր բարբառներով գրված գեղեցիկ կտորների, որոնք ի դեպ երբեմն վրիպել են հետագուս բանահավաքների աչքից:

Ախվերդյանը հիացած էր այդ խաղիկներով: Գտնում էր, որ «դրանք սքանչելի են» արտահայտում ժողովրդական անարատ զգացմունքները, իրենց վրա պահում հայկական տաղաչափության անեղծ կնիքը:

Այս պրպտումների ժամանակ Ախվերդյանի ուշադրությունը կենտրոնանում է «ազգային երգիչներու կամ աշուղներու» երգերի վրա, որոնք «պահպանել է ազգն ավել պակաս թե ավանդութենով, թե գրով»: Այդ անպաճույճ «խաղասողներն» իրենց տաղերի իմաստուն պարզությամբ, միևնույն ժամանակ բանաստեղծական խոսքի գունեղությամբ, արտահայտչությամբ ու աշխուժությամբ գերում են Ախվերդյանին: Նա, արժանին հատուցելով աշուղներին, որոնք մշտապես կապված լինելով ժողովրդի հետ, նրա ցավերի և ուրախությունների հարազատ արտահայտիչներն են, գրել է, որ «ներսք խրախճանքում ուրախացրել ու տրտմության մեջ սուգ են արել ազգի հետ. ու ինչ տեղ վարդապետն պակսեցրել է քարոզն, սրանք անդադրիլ՝ թե սիրտը շահելով, թե խրատով, թե պարսավով կրթել են իրենց ժողովրդին»: Դրա մեջ էլ Ախվերդյանը տեսնում էր այդ ժողովրդական երգիչների ստեղծագործության խոշոր արժանիքը, արձանագրելով, որ նրանց «խաղերից ավելի ենք նկատում ազգային ոճն, քան թե պատմական հաստ-հաստ գրքերիցն»:

Ախվերդյանը ջանասիրությամբ հավաքում է աշուղական բանաստեղծության «գրով» պահպանված նմուշները: Տարիների ընթացքում նրա մոտ կուտակվում են ոչ միայն Թիֆլիսում, այլև Նրևանում, Գանձակում, Շամախիում, Հաշտարխանում ապրող մոտ չորս տասնյակ աշուղների ստեղծագործությունները, երբեմն միայն առանձին թերթիկներ, իսկ երբեմն ստվար դավթարներ: Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանում պահպանվող նրա թղթերում մենք գտնում ենք ոչ միայն այժմ գրական աշխարհին հայտնի աշուղների դավթարները, այլև անթիվ գեղնած պատառիկներ՝ հայերեն կամ վրացերեն տառերով գրված հայ անանուն աշուղների առանձին երգեր, որոնք հայ մարդիկ երկար ժամանակ ման են ածել իրենց ծոցազրպաններում, ժառանգություն թողել իրենց որդիներին և վերջապես բերել հասցրել հուսալի ավանդապահ Գևորգ Ախվերդյանի ձեռքը: Նա խնամքով գրի է առնում նաև «ավանդութենով» տարածվող երգերը:

Ահա այս եղանակով Ախվերդյանը կորստից փրկում է XVIII—XIX դարերի հայ մտավոր մշակույթի մի գլխավոր մասը՝ աշուղական գրականության բազմաթիվ գոհադներ, առաջին անգամ ուշադրություն հրավիրում Շամշի Մելքոյի, Միսկին Բուրջիի, Թուրինջի, Քիչիք-Նովայի, Ազբար Ադամի, Սեյադի, Շիրինի և այլոց ստեղծագործության վրա:

Դա Ախվերդյանի խոշոր ծառայություններից մեկն է հայ գրականության պատմության մեջ, բայց ոչ միակը:

Ախվերդյանը կարգի էր բերում և պատրաստվում էր մաս առ մաս հրատարակել իր հավաքած հարուստ նյութը: Բայց մի երջանիկ անակնկալ գալիս է սրբագրելու նրա ծրագիրը: Բժիշկ Հովհաննես Փոնդոյանը, դիտենալով, թե իր բարեկամ Ախվերդյանն ինչպիսի սիրով ու հափշտակությամբ տարված է հայ աշուղական գրականության նշխարների հավաքմամբ, Թիֆլիսի Զգրաշեն եկեղեցու ավագ քահանա տեր Մովսեսից «աղաչանքով հանում է» վերջինիս մոտ պահվող իր պապի երգարանը և տրամադրում Ախվերդյանին:

Ախվերդյանն անակնկալի է գալիս: Իր ձեռքում էր Թիֆլիսեցի աշուղ Սայաթ-Նովայի դավթարը. աշուղը մեռել էր դրանից մոտ հիսուն տարի առաջ, քաղցր հիշողություններ թողել համաքաղաքացիների մեջ, բայց երգերը համարյա մոռացվել էին, «ավանդությունով» բերանից բերան անցնելով, կիսով չափ կորցրել էին իրենց բնագրերի հրապույրը: Իսկ Սայաթ-Նովայի անձնավորության մասին ծերերը միայն այն էին հիշում, որ նա իր ժամանակին «շատ զոդիր ի շանց տվի»:

Անծանոթ ու մոռացված երգչի առաջին իսկ բանաստեղծությունների ուշադիր ընթերցումը բանասերին բերեց այն եզրակացության, որ ինքը գործ ունի մի զորեղ բանաստեղծական տաղանդի հետ, որպիսին հազվագյուտ է իր գիտեցած օտար գրականությունների մեջ ևս, որի ամեն մի երգում հորդում է մարդկային անարատ սիրո, նվիրվածության զգացմունքը՝ արտահայտված շքեղ, կախարդիչ պատկերներով ու քաղցրահնչյուն տաղաչափական ձևերով:

Հրապուրված իր գյուտով, Ախվերդյանը հետաձգում է իր մինչ այդ հավաքած երգերի հրատարակությունը³ և խանդավառությամբ ձեռնամուխ լինում ադ թովիչ բանաստեղծի «խաղերի» ուսումնասիրությանը:

Այդ դավթարում նա հայտնաբերում է Սայաթ-Նովայի հայերեն տառերով գրված՝ 114 աղբյուրներեն, վրացերեն տառերով գրված՝ 46 հայերեն բանաստեղծություն: Գիտության համար խնամքով պահպանելով աշուղի աղբյուրներեն երգերը և, չդադարեցնելով ժողովրդի մեջ ավանդաբար պահպանված նրա վրացերեն և հայերեն խաղերի հավաքումը, Ախվերդյանը գլխավորն տարվում է հայերեն խաղերի բնագրի և իմաստի վերծանմամբ և ուսումնասիրությանը: Այդ մասին նա իր բարեկամ էմինին գրում էր. «Թե որքան եմ տառապել վրացերեն տառերով գրված այդ հայերեն երգերի վերծանման համար, միայն աստծուն է հայտնի»:

Դժվար չի լինի պատկերացնել բանասերի կատարած աշխատանքի ծանրությունը, եթե հաշվի առնենք, որ ձեռագրի առանձին թերթեր մաշվել էին, տեղ-տեղ տառերը շատ թերթատելուց ջնջվել էին, որ վրացերեն տառերով գրված բանաստեղծությունները ձայնավորների սղման, տառասխալների,

3 Այդ երգերը 1903 թ. Թիֆլիսում հրատարակեց բանասերի դուստր Մանե Ախվերդյանը «Հայ աշուղներ» — Գրուսանք, Բ հատոր խորագրով:

առանձին բառերի աղավաղման, կետադրությամբ նշանների բացակայության⁴ և մանավանդ երկու լեզուների հնչունաբանական տարբերությունների պատճառով շատ դժվարությամբ էին հասկացվում:

Այսպես, օրինակ՝ վրացերեն «ի» տառը մի դեպքում գործածված է որպես հայերեն «ի», իսկ մյուս դեպքերում՝ «ը»-ի փոխարեն, որ չափազանց դժվարացնում է բնագրի վերծանումը: Հայերեն տառադարձելու դեպքում «Գուգիմ ումբրս հենց անցկացնեմ» բանաստեղծության մեջ կստանանք այսպիսի մի բանատող՝

էրեսիս հայալու պահիմ առբս մունաթ չի քաշե,

որտեղ միայն մի տեղում է «ի»-ն իր նշանակությամբ գործածվել, իսկ երեք տեղում փոխարինել է «ը»-ին. քիչ ջանք չի պահանջել սայաթնովական գողտրիկ բանատողի վերականգնումը՝

էրեսըս հայալու պահիմ՝ արըս մունաթ չը քաշե:

Դրություներն ավելի էր բարդանում տառասխալների պատճառով: Ձեռագրի 126-րդ էջի բանաստեղծության առաջին տողը հայերեն տառադարձելու դեպքում կարդացվում է՝

Շատ սիրուն իս շախաթայի ասողին խառ չիսնի:

այստեղ տեական աշխատանք էր պետք կորած ձայնավորը վերականգնելու, կետադրությունը որոշելու համար, որպեսզի վերականգնեն բանատողը՝

Շատ սիրուն իս, Շախաթայի, ասողին՝ խար չիս անի:

Թվում է, թե այդ պայմաններում հայերեն տեքստի անթերի հրատարակությունն անհնար էր, բայց ամենադժվարին դեպքերում էլ Ախվերդյանը ցուցաբերում է գիտական մեծ բարեխղճություն և գովելի զգուշավորություն: Այդպիսի դեպքերում նա գերադասում է առանձին տողերի տեղ բազմակետեր նշանակել, քան թե որևէ անստույգ բան դրել: Օրինակ՝ դավթարի 105-րդ էջում «Պատկիրքդ դալամով քաշած» բանաստեղծության հինգերորդ տան երկրորդ տողի առաջին հատածը աղավաղված է, տառադարձելու դեպքում ստացվում է մի այսպիսի ամբողջական զանգված՝ «նովափառնիկծվաին»։ Նոր աղավաղումներից խուսափելու համար նա բաց է թողնում հատածը, այդ տեղում բազմակետեր նշանակելով:

Վերծանման բարդություններն այդքանով չեն վերջանում: Այս բոլորի վրա պետք է ավելացնել Սայաթ-Նովայի բառարանի առանձնահատկությունը՝ պարսկերեն և արաբերեն շրջասությունների և փոխաբերությունների առատությունը, շատ բառերի բաղմամաստության փաստը: Պարզ է, որ յուրաքանչյուր բառի ճիշտ վերականգնումից ու ճիշտ տառադարձումից էր կախված բանատողերի անսխալ վերծանումը և բանաստեղծական կշռույթի վերականգնումը:

Ահա այս դժվարությունները հաղթահարելով է Ախվերդյանը համեմատաբար կարճ ժամանակում պատրաստել Սայաթ-Նովայի ժողովածուի տեքստը, կազմել բառարանը:

⁴ Առանձին երգերում յուրաքանչյուր բառից հետո միջակետ կամ վերջակետ է դրված:

Օգտվելով միշտ նույն աղբյուրից՝ ժողովրդից, Ախվերդյանը գրում է տասնամյակների հեռվից իր հետ խոսող ու հմայող երգչի կենսագրությունը, վերականգնում նրա ծննդյան, բուռն գործունեության ու եղբրական մահվան թվականները, կյանքի կարևոր դեպքերը, տալիս նրա գործունեության բնութագիրը և բանաստեղծական վաստակի առաջին ընդարձակ, ամբողջական և ջերմ գնահատականը:

Սայաթ-Նովայի երգերի առաջաբանի ընթերցողը չի կարող չհիանալ գիտնական-բժշկի գրականագիտական հմտություններով: Նրա սեղմ, բայց՝ ճշգրիտ տողերի մեջ յուրաքանչյուր բնորոշում և գնահատական տրված է լուրջ կշռադատությամբ հետո: Բարեբախտաբար պահպանվել են նաև առաջաբանի ուսերեն լեզվով գրված տարբերակներից մեկի պատառիկները, որոնք ցուցադրում են Ախվերդյանի ստեղծագործական լաբորատորիան: Նրա մոտ բարձր է բանաստեղծական զգացողությունը, որն արտահայտել է գունեղ բանաձևումներով: Նա հայ ժողովրդի «պովետական զգացման» բացակայության մասին խոսողներին է ուղղում իր խոսքը, երբ այդ տարբերակում գրում է.

«Երկու զգացմունքներ են ուղեկցում մարդուն օրօրոցից մինչև գերեզման՝ ուրախության և տխրության զգացմունքները: Յուրաքանչյուր մարդու և ժողովրդի կյանքը դրանցից է հյուսված: Մարդն այդ զգացմունքները պահում է սրտում, ժողովուրդը՝ իր երգերում: Ցանկանում եք իմանալ, թե ինչն է ուրախացրել, ինչից է լացել որևէ ժողովուրդ՝ վերցրեք նրա երգերը՝ ուրախությունների և տխրությունների այդ սափորը... Առանց այդ գեղեցիկ համակրության երկրի վրա ամենայն վսեմի ու գեղեցիկի՝ մարդկային հոգու նկատմամբ, մարդը չի կարող մարդուն ճանաչել, ճանաչել նրա երգերը՝ ժողովրդի ուրախություններն ու տառապանքները»⁵:

Ոգևորված Սայաթ-Նովայի երգերի հմայքով, Ախվերդյանը պնդում է, որ հայ ժողովուրդը զուրկ չէ «պովետական զգացմունքից», ավելին՝ նա երբեմն ստեղծել է հանճարեղ երգեր, որոնք ինքնատիպ են, անկրկնելի: Նա գրում է. «Չկա սիրտ առանց ուրախության ու տառապանքի, չկա ժողովուրդ առանց երգի: Այդ երգերը տարբեր են, ինչպես ժողովուրդների երկինքն ու երկիրը, ինչպես նրանց կյանքի ձևերն ու պայմանները, որոնք խոր տարբերության կնիքն են դնում ժողովրդի երգերի վրա»:

«Գուսանքի» առաջաբանը գրելու համար կատարված սեագրություններ ակնառու կերպով ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ պատասխափնատվությամբ էր Ախվերդյանը ձեռնամուխ լինում Սայաթ-Նովայի ստեղծագործությունն ընթերցողին ներկայացնելու և այն ըստ ամենայնի վերլուծելու բարդ և աննախադեպ աշխատանքին:

Իր լուրջ գիտական ուսումնասիրության մեջ Ախվերդյանը ցույց է տալիս, որ «էս հանճարեղ հանկարծախոսն» ժողովրդի մեջ կատարել է «հոգևոր բժշկի պաշտոն», ամենուրեք շռայլորեն բարի խրատ և ուրախություն է «ցանել» և ազնվացրել, վեհացրել է իր ունկնդիրների հոգին: Երգելով սեր ու գոգալ, Սայաթ-Նովան «հեռու է մնացել հեշտասեր ցանկութենից», ուստի բանաստեղծի հոգին «ձնի տակեն նուր դուս էկած արիվ դիբած սնբուլի պես պայծառ ու սաքուր է»:

5 Կողմ, ֆոնդ 38, գործ 2, թ. 53—54.

6 Նույն տեղում:

Ախվերդյանն իր աշխատության մեջ Սայաթ-Նովային ներկայացնում է որպես մտածողի ու դաստիարակի, որը մերկացնում է իր ժամանակի ապականված բարքերը, որոնց ուժով «ղուրթն ճամփա չէ դնում», որովհետև «խալխի սուտն շատացիլ է», ուստի բանաստեղծը կոխվ է հայտարարում ստի ու կեղծիքի դեմ: Ախվերդյանը խոր հիացմունքով արձանագրում է, որ «էս ազգային երգիչն հասկանում է էլեւ իր կոչումն, ու նրա միտքն լավ հասնում է էլիլ իր պաշտոնին»: Սայաթ-Նովան սոսկ երգասաց ու «ղողիր շանց տվող» չէ, այլ «խալխի նոքար», որ իր սրբազան պարտքն է համարում անշահախնդիր կերպով ծառայել ժողովրդին, «որն որ անվանելով ծուռ փետ, գիտն որ սրա դրստելն քերթողի սուրբ պարտքն է»:

Տևական ու լարված տեքստաբանական աշխատանքը, գուսանի ստեղծագործությունների բնույթի գրականագիտական հետազոտությունը բանասերին բերում են այն համոզման, որ այդ վիճակում Սայաթ-Նովան դեռևս հրատարակության հանձնել չի կարելի: Նրա առաջ ևս ծառանում է նույն մտահոգությունը, ինչ մի քանի տարի առաջ այնքան տանջել էր խաչատուր Աբովյանին: Բանաստեղծական այդ գոհարներն ժողովրդական լայն խավերի ուշադրությունը հանձնելու, գուսանի ստեղծագործությունն իրոք կենդանացնելու համար անհրաժեշտ էր նախապես որոշել մի կարևոր հարց. ի՞նչ լեզվով մատուցել Սայաթ-Նովային՝ գրաբար, թե՛ աշխարհաբար շարադրանքով: Եվ բանասերը հաստատապես կանգ է առնում աշխարհաբարի վրա: Հետագա բանասերները միանգամայն ճիշտ են նկատել, որ «եթե նա իր գործը գրաբար գրեր, ապա բոլոր եղած հայ գրքերի հետ միասին՝ յուրն էլ պիտի մի փոքրամասն կարդացողների խցերի կամ հացատների անկյուններում փոշինների մեջ թաղված ընկներ և ժողովուրդն անմասն պիտի մնար»:

Նույն իրավունքով, որով Աբովյանն իր «Վերք Հայաստանին» գրելիս առաջնությունը տվել է Քանաքեռի բարբառին, Ախվերդյանը ևս իր ուսումնասիրությունը գրելիս առաջնությունը տալիս է իրեն քաջածանոթ Քիֆլիսի բարբառին, մանավանդ, որ Սայաթ-Նովան այդ բարբառով էր գրել: Այստեղից էլ առաջ է գալիս այդ բարբառի «շենքսի վրա» լեզվաբանական տեղեկություններ հաղորդելու անհրաժեշտությունը. գրել գիտական հանրամատչելի մեկնաբանություն բարբառի քերականական կառուցվածքի և հնչյունաբանության վերաբերյալ, ամենաբնորոշ հատկանիշների ցուցադրմամբ գծել այդ կենդանի լեզվի պատկերը:

Սայաթ-Նովայի երգերի առաջաբանը Ախվերդյանն ավարտել է անկողնում, հիվանդ վիճակում: Էմինին գրած նամակում նա այդ մասին ասում է. «Ձդիտեմ, թե ինչ կասես այս առաջաբանի բովանդակության և հայերեն գրելու իմ ձևի մասին... Ինչ արած, ավելի լավ չէի կարող: Թեև իմ երևակայությունը, կամ ավելի լավ է ասել՝ սրտի բնավոր (որովհետև ես երևակայություն չունեմ) լրացնում է փաստերի, մտքի պակասը, բայց և այնպես, ինձ թվում է, որ ես չեմ սխալվում: Մեկ էլ տեսար, կարող է պատահել, իրերի նկատմամբ իմ ունեցած հայացքը բրնձ մեկին դրդի նորանոր որոնումների—ես միանգամայն երջանիկ կլինեմ և այնքան էլ չեմ մտատանջվի, թե ինչպես կընդունվի իմ աշխատանքը և իմ կարծիքը: Բարեկամս, միայն կրկին անգամ կարող եմ չեզ ասել, որ ես չեմ դավաճանել իմ բարեխղճությանը, Այստիղ (Հառաջարկում—Դ. Մ.) շատ ենթադրություններ կան, որոնք ես մատուցում եմ որսվես ենթադրություններ՝ սպասելով նոր փաստերի հայտնաբերմանը, Այգ գծով

ոչինչ չի արված մեզանում: Ես չեմ խոսում իմ մտքերի մասին, այդ ամենը անհեթեթություն է, բայց եթե դու իմ ձգտման մեջ, իմ ուղղության մեջ ճշմարտության գոնե մի կայծ գտնես, ապա ես գոհ ու երջանիկ կլինեմ»⁷:

Ախվերդյանի ժողովածուն ընդգրկում էր Սայաթ-Նովայի միայն 46 հայերեն երգերը: Կազմողն զգուշացել էր տեղ տալ ավանդաբար հաղորդված երգերին, որոնք, նրա կարծիքով, խիստ աղավաղվել էին, հեռացել բնագրից: Գրքի տպագրությանը հսկում էր նրա բարեկամ Մ. էմինը, որն ապրում էր Մոսկվայում: Ախվերդյանը բարձր էր գնահատում վերջինիս լեզվագիտական և բանասիրական հմտությունը, բայց պահանջում էր հրատարակության ժամանակ անվերապահորեն ենթարկվել իր սկզբունքներին: Նա իրավամբ նշում էր, որ իր պատրաստած «Գուսանքն» իր աշխարհաբարով, իր գիտական ապարատով միանգամայն նորություն է՝ «մենք, հայերս նման աշխատություն չունենք»: էմինի այն առարկությունը, թե խորագրի Գուսանք բառը պետք է փոխարինել երգիչ բառով, որը, նրա կարծիքով, ավելի հարմար էր ժողովածուի բնույթին, Ախվերդյանը կտրականապես մերժում է, ի միջի այլոց անելով նաև հետևյալ փաստարկումը. «Երգիչ բառը այնուամենայնիվ իր մեջ պարունակում է միայն երգողի հասկացողությունը, իսկ գուսան բառի մեջ առկա են երգող, երաժիշտ և բացի այդ ժողովրդական հասկացողությունները, այսինքն՝ մի անձնավորություն, որ երգել ու նվագել է ժողովրդի մեջ՝ տանը, փողոցում»⁸:

Իր աշխատության համար Ախվերդյանն ընտրել էր ուրույն ուղղագրական սխատեմ, որը ճշտորեն արտահայտում էր Թիֆլիսի բարբառի հնչյունական պատկերը. գրքի հրատարակության առթիվ էմինին գրած իր հրահանգ-նամակում նրան զգուշացնում էր. «Ուղղագրությունը բարբարոսական է, բայց ճշգրտության և նպատակիս հասնելու համար ես հարկադրված էի դիմել այդ սխատեմին, այլապես ամեն ինչ կկորչեր: Եվ դրա համար է՛, բարեկամս, խնդրում եմ խստիվ հետևել ձեռագրին և ոչ մի ուղղում չկատարել, մանավանդ երգերի մեջ, որտեղ նույնիսկ մի բառի փոփոխությունը ես կանվանեի հանցագործություն»⁹:

Ի պատիվ էմինի պետք է ասել, որ հրատարակության մեջ կետ առ կետ պահպանվեցին Ախվերդյանի սկզբունքները:

Սայաթ-Նովայի երգերի առաջին գիտական հրատարակությունը պատրաստելիս Ախվերդյանի միակ ձգտումն էր վերհանել ազգային մշակութի գանձերը և դրանք ծառայեցնել հարազատ ժողովրդի ինքնաճանաչման գործին: Ինքն այդ մասին գրում էր. «Ես գիտնական փառք չեմ փնտրում. և ես ի՞նչ գիտնական եմ: Ես պատրաստ եմ հետազայում էլ նույն ոգով աշխատել և ոչ այլ կերպ: Ես ինքս անձամբ համոզված եմ նման աշխատության անհրաժեշտության մեջ և կաշխատեմ քանի աչքերս ծառայում են ինձ»¹⁰:

Աշխատանքը ոգևորում և հոգեկան սնունդ էր տալիս նրան: Մի այլ նամակում նա նորից գրում է. «Ես ինքս գոհ եմ իմ աշխատանքից. ո՛ր նրա համար, որ այն սքանչելի է, այլ նրա համար, որ նրան եմ պարտական իմ բարոյական ուժերի երկարատև պահպանության համար: Շնորհակալ եմ Սայաթ-

7 ԿՄ ԳԱԹ, էմինի ֆոնդ, № 748:

8 Նույն տեղում, № 744:

9 Նույն տեղում № 742 (ընդգծումները մերն են—Գ. Մ.):

10 Նույն տեղում, № 745:

նովա ից, նա երկու տարով հեռացրեց ինձանից իմ իսկական հիվանդութիւնը»¹¹,

Սայաթ-Նովայի ստեղծագործության պատրաստվող հրատարակությունը իր ժամանակի համար մշակութային խոշոր երևույթ էր, որին ակնդետ հետևում էր ամբողջ գիտական աշխարհը։ Դեռևս 1851 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Կավկազ» թերթում հայ գուսանի մասին ընդարձակ հոդված զետեղեց ռուս դրող Յա. Պոլոնսկին։ Սայաթ-Նովայի ստեղծագործությանը նա ծանոթացել էր Ախվերդյանի միջոցով։ Նույն շրջանում ֆրանսիացի հայագետ Դյուլոյրիենն էմինից տեղեկացած լինելով Ախվերդյանի աշխատանքի մասին, Փարիզի «Երկու աշխարհ» թերթում տպագրած իր հոդվածում բարձր գնահատական էր տալիս Ախվերդյանի գործունեությանը և գրում. «Մեզ մնում է ցանկանալ, որ այդ ժողովածուի հրապարակումը մեզ շուտով առիթ կտա ճանաչելու և գնահատելու նոր Հայաստանի ժողովրդական մուսայի ստեղծագործությունները»¹²,

Ախվերդյանի աշխատությունը լույս տեսավ «Գուսանք, Ա գիրք» խորագրով և մեծ ընդունելություն գտավ։ Նույն «Կավկազ» թերթը «Գուսանքի» լույս տեսնելուց անմիջապես հետո ընդարձակ հոդված է նվիրում այդ գրքին և դրվատանքի խոսքեր ուղղում նրա գիտնական հրատարակչի հասցեին։ Թերթը գրում էր. «Այս գիրքն արդեն լույս է տեսել, ուստի մենք մեզ վաղուց հայտնի դադտնիքը հրապարակած չենք լինի, եթե ասենք, որ նրա վրա վաղուց աշխատում էր Յու. Յ. Ախվերդյանը։ Այդ տքնաջան հայասերը իր առաջ հեշտ խնդիր չէր դրել՝ հրատարակել հայ աշուղների եթե ոչ բոլոր երգերը, ապա դրանց մի մասը»։ Եվ այնուհետև, շեշտելով գրքի նշանակությունը Կովկասի պայմաններում, թերթն արձանագրում էր. «Յու. Ախվերդյանի լույս ընծայած գիրքը հիանալի է ոչ միայն նրանով, որ հրատարակված է հայոց լեզվով՝ չափազանց բացառիկ երևույթ Ռուսաստանում, այլև իր ներքին միանգամայն հետաքրքրական նշանակությամբ ու արժեքով»¹³։ Խմբագրությունը Ախվերդյանի հետազոտության գիտական արժեքը ցուցադրելու նպատակով ամբողջությամբ թարգմանում և տպագրում է նաև գրքի առաջաբանը։

Ժամանակի սակավաթիվ հայերեն պարբերականները ևս արժանին են հատուցում Ախվերդյանին։ Դեռ մինչև գրքի լույս տեսնելը Թիֆլիսում հրատարակվող «Արարատ» պարբերականը 1851 թ. սկզբներին ծանուցում էր Սայաթ-Նովայի երգերի պատրաստվող հրատարակության մասին. «Սորա ամենայն երգերն և լիակատար վարուց ստորագրութիւնն շուտով ի լոյս կընծայուի ազգասիրական ջանիք ուսումնասէր և հայրենասէր բժշկապետի Գէորգեա Յ. Ախվերդեանց, որ քանի ամիսց հետե իւր պարապոյ ժամերն այն գեղեցիկ աշխատութեանց նուիրելով ժողովել է որպէս այն ինքնաձեռագիր օրինակն ու նպես և այլ տեղերէն Սալադեանց հայ բանաստեղծի աշխատութիւններն»¹⁴։

Այն ժամանակ դեռևս Փարիզում հրատարակվող «Մասյաց աղավին» ընդարձակ հոդված է նվիրում «Գուսանքին» և, միաժամանակ, արևմտահայերեն ու ֆրանսերեն տպագրում է Սայաթ-Նովայի մի քանի բանաստեղծությունները։

11 Նույն տեղում, Ն. 751։

12 Ռուսերեն թարգմանությունը տես «ԿՅՅԿՅՅ», 1853, № 8։

13 Նույն տեղում, 1853, № 10։

14 «Արարատ», 1851, № 30, էջ 447։

ները և Ախվերդյանի առաջաբանը. որպեսզի «բնագրին հատկություններն ու տեղ-տեղ գեղեցկություններն ալ անծանոթ շման ընթերցողաց»¹⁵ խմբագրությունը զուգահեռաբար տպագրում է թե՛ բանաստեղծությունների և թե՛ առաջաբանի բնագրերը:

Նույն տասնամյակից սկսած Սայաթ-Նովայի խաղերն անմիջապես մշտնում են հայկական երգարանների մեջ, դառնում նրանց զարդը: Դեռևս 1856 թ. նրանցից երկուսը տպագրվում են Գամառ Փաթիսյայի «Ազգային երգարան հայոց» գրքի մեջ, հետագայում Մ. Միանսարյանցի «Քնար Հայկականում» և ստանում լայն տարածում:

Այսպիսով, Ախվերդյանի համառ ջանքերի շնորհիվ, թոթափելով ժամանակի փոշին, նորից էր աշխարհ գալիս Սայաթ-Նովան, ընդմիջտ գրավելու իր պատվանդանը հավասարների շարքում, Այդ օրվանից Ախվերդյանի անունը անխզելիորեն կապված ենք տեսնում XVIII դարի խոշորագույն քնարերգուի անվան հետ: Իրավացի էր բանաստեղծ Հովհ. Թումանյանը, երբ կես դար առաջ մամուլում և հրապարակային գասախոսություններում ջերմորեն պրոպագանդելով Սայաթ-Նովայի ստեղծագործությունը, հայտարարում էր, որ անմահ երգչի հիշատակին նվիրված ամեն մի հանդես ծառայում է նաև բանասեր Գեորգ Ախվերդյանի հիշատակի հավերժացմանը՝ մի պայծառ հայրենասերի, որը «ժամանակի ամենակուլ բերանից» փրկեց գուսանի ստեղծագործությունը և դարձրեց իր ժողովրդի ու մարդկության սեփականությունը:

Ախվերդյանի «Դուստնքի» տպագրության օրից սկսվեց հանճարեղ քնարերգուի հաղթական երթը դեպի դարերը: Անցած 110 տարիների ընթացքում տասնյակ լեզուներով թարգմանվելով, Սայաթ-Նովայի պոեզիան վաստակեց համաշխարհային համբավ: Զարգացավ նաև սայաթնովագիտությունը. ասպարեզ եկան նորանոր հետազոտողներ՝ Գ. Ասատուր, Գ. Լևոնյան, Ի. Գրիշաշվիլի, Գ. Լեոնիձե, Լ. Մելիքսեթ-Քեկ, Մ. Հասրաթյան և ուրիշներ, որոնք շատ բան ճշտեցին Ախվերդյանի ուսումնասիրության մեջ՝ գուսանի տեքստերը, կենսագրական փաստերն ու տարեթվերը, հայտնաբերեցին նոր բանաստեղծություններ, որով լրացրին երգչի հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն լեզուներով գրված բանաստեղծությունների ցանկը: Բայց բոլոր սայաթնովագետները միշտ պատկառանքով ու ակնածությամբ հիշատակեցին այդ մեծ երախտավորի անունը, բարձր գնահատեցին նրա մեծագործությունը:

Բայց Գ. Ախվերդյանի ծառայությունը միայն այն բանի մեջ չէ, որ նա հանդես բերեց մի հարազատ, դեղեցիկ ու մեծ անուն, ջերմացավ ու սերունդներին ջերմացրեց «նրա մշտավառ հոգու անշեջ կրակով» (Հ. Թումանյան):

Մեծ, անշափ մեծ է Սայաթ-Նովայի երգերի առաջին գիտակաճ հրատարակությանը կցված առաջաբանի դրականագիտական նշանակությունը: Դա հայ նոր գրականության դարդացման ճանապարհը լուսավորող առաջին ջահն էր՝ անմար ու պայծառ, որն իր դրական ղերը կատարեց հայ գրականագիտական մտքի պատմության մեջ:

Պակաս դեր չի կատարել նաև այդ նույն գրքին կցված «Թիֆլիզու բարբառի մե քանի հատկություններու վրա» աշխատությունը, որը դարասկզբի հայ լեզվաբաններից Լևոն Մսերյանցի բնորոշմամբ «կարող է պատիվ բերել ամեն մի լեզվաբանի»: Դա իր հերթին մի լուրջ լեզվաբանական ուսումնասիրություն

15 «Մասյաց աղավնի», 1855, էջ 69:

է հայկական մի կարևոր բարբառի վերաբերյալ, որտեղ հեղինակն ըստ ամենայնի բացահայտում է այդ բարբառի բնորոշ առանձնահատկությունները, հարուստ փաստական նյութ տրամադրում բարբառի հնչյունական կազմության, բառանյութի և քերականական կառուցվածքի վերաբերյալ:

Այդ ուսումնասիրությունն, իր անխուսափելի թերություններով հանդերձ, մի խոշոր ավանդ է հայոց լեզվի բարբառների գիտական ուսումնասիրության ասպարեզում, զորեղ վկայություն այն անուրսնալի դերի մասին, որ ունեցել է Ախվերդյանը մեր աշխարհաբար լեզվի զարգացման գործում: Մի հարց, որը անցյալում ճիշտ գնահատություն չի ստացել և տակավին սպասում է իր բարեխիղճ հետազոտողին: